

ՄԵՐ ԱՐԻԻՆՈՏ ԱՆՑԵԱԼԻՑ



Մայիսը դեռ նոր էր սկսուել: Դեռ նոր էր Գողթնեաց գաւառի ողջ բնութիւնը զարդարուել, պծնուել և նորահարսի նրման արտաքս բերել իր սքանչելի դեղեցկութիւնը, որը ամենուրէք իր փարթամ, իր հարուստ արդուզարդով հիասթափիչ տպաւորութիւն էր թողնում նայողի վրայ և իր հրաշագեղ բուրմունքով ասես մի առ մի նկարագրում է քեզ բնութեան հրաշակերտ դորութիւնը:

Սակայն այդ տարուայ մայիսը խիստ զանազանուած էր նախընթաց տարիների մայիսից. թւում էր թէ՛ մի դիւական ստուեր էր անցել գուսանների այդ նուիրական աշխարհի վերայով և իր լետեից թողել մի ինչ որ խորհրդաւոր, ինչ որ մեռելային լուութիւն: Եւ այդ այնքան ակներև էր աչքի ընկնում, այնքան զգալի ցցւում առաջիդ, որ ինքդ էլ ակամայից ստիպուած էիր լինում դիտել շուրջդ համոզուելու թէ՛ արդեօք լրսողներ չկան քեզ, և երբ մենակ էիր զգում քեզ, հարցնում էիր քեզ ու քեզ. «ի՞նչ դիւական գաւազանի ազդեցութեա՛ր է արդեօք քար կտրել համայն այս բնութիւնը և զերեզմանական լուութեան կապանքների դիրկը ընկել: Մի՞թէ տարաբաղդ հողի քաղցրախօս գուսաններն են ոտքի կանգնել և մի սպառնական հայեացքով պապանձեցրել բոլորի լեզուները, ասելով թէ՛ «մեզանից լետոյ, ո՛վ ապերախտ ծննդալալը, դու սուգ չպահեցիր, դու չ'ողբացիր քո հարազատ երգիչներիդ կորուստը, այժմ արժանի է քեզ պապանձուել և ցաւատանջ երերու քների խոհերով մաշուել, ապա հասկանալ, որ մեր հայրենի ծնծղանե-

րի ծայրերը անդարձ կորել են քեզ համար... Զ'կային և առօրեայ եռուն շարժումներ: Անցուդարձը վաղուց էր դադարել. նոյնիսկ ամենամօտիկ դիւղից միւսը անցնել խիստ դժուարացել էր և վտանգաւոր դարձել, իսկ քաղաքի հետ յարաբերութիւնները մի շարաթից աւելի էր, ինչ իսպառ կտրուել էր: Եւ ամենքը սե թախիժով լցուած՝ ակնապիշ սպասում էին, թէ ինչ տեղեկութիւն է գալիս քաղաքից: Բայց տեղեկութիւն չըկար ու չ'կար: Եւ վերջապէս, ո՛վ էր իր գլխից ձեռք վեր առել որ քաղաք անցնէր, և ամեն «խէր ու շառը» իմանար ու վերադառնար մեզ այդ աւետելու: Իսկ ով յանդգնում էր դուրս գալու, որպէս ղի քաղաք գնայ և մի բարի «խարար» բերէ մեզ, ալլես չէր վերադառնում. թուրքերը ամեն ծակ ու ծով բռնել էին՝ երեւցողին խփում էին և սպանում: Հէնց այդ էր պատճառը, որ այդ մի շարաթուայ ընթացքում անհաստատան սպանութիւնները օր ցերեկով տեղի էին ունենում, յանախ նոյնիսկ պաշտօնական անձանց քթի տակին:

Այսպէս էր մեր դրութիւնը 1905 թ. մայիսի 12-ին:

Այսպէս էր և զրեթէ բոլոր մեր հայ դիւղերի դրութիւնը:

Մենք ընդհատուած էինք քաղաքից, հետեւապէս և դրսի աշխարհից և անկարող էինք ստուգելու թէ՛ ինչ է կատարւում մեզանից ոչ հեռու, մի քանի վերստի վրայ, մեր եղբայրների, մեր հարազատների և մեր սիրելիների հետ:

Այսպիսի խոհերով ծանրաբեռնուած՝ մենք երեկոյեան զանգաւների ծայրերի հետ շտապեցինք եկեղեցի: Այսպիսի դառն ճգնաժամներում հայի պապենական յատկութիւնն է առանձնապէս իր եկեղեցում և աղօթել, երբ յոյսը, ճարը կտրած է լինում ամեն տեղից: Այդ օր եկեղեցում սովորականից աւելի բազմութիւն կար. սակայն բոլորի էլ դէմքերի վրայ պարզ կարդացւում էր մի հոգեկան խորին դառնութիւն, մի ներքին կրօնական, որը իր ցաւոտ հետքերը այդ օր աւելի քան ինքնուրոյն գոյներով էր դրօշմել իր դոհերի ճակատներին, ուր անյոյս փոթորիկը, այլժուպի յուզմունքը թանձր շերտերով հեռուից նրշմարում էին նրանցից իւրաքանչիւրի կնճիռների արանքներից:

Ո՛վ կասէր, թէ եկեղեցու այդ մեծ բազմութիւնը աղօթ-

քի, մաղթանքների խոկումներով է ղրաղուած: Ո՛հ, այդ աղօթք
չէր, այլ մի սրտամորմոք հեծկտանք և խուլ հառաչանք: Ամեն-
քըն էլ կասես բնաղղմամբ ղգում էին, որ իրանց սպասում է մի
արիւնոտ, մի կսկծեցուցիչ ապագայ, որը պիտի օրհասական նը-
շանակութիւն ունենայ թէ իրանց և թէ ողջ հայութեան հա-
մար: Գեղջուկը լաճախ է լսում իր սրտի ծայնին, նա նրա ըստ-
րուկն է. նա չ'զիտէ՝ ի՞նչ բանէ բնաղղը, այլ ղրանից աւելի լա-
ւը ղիտէ սրբադործւած իր բիւրաւոր փորձութիւններով. նա
այսպիսի պարագաներում միշտ կրկնում է. «սիրտս վկայում է,
որ մի փորձանք, մի սև օյին պիտի գայ գլխիս»: Այո՛, գեղջու-
կը ունի սրտի լեղու:

Ճէնց այսօր էլ այդպէս էին ամենքը համակուլած և ախա-
մայից մրմնջում էին այն, ինչ դուրս էր ցայտում նրանց ներքին
խռովութիւնից:

Տխուր էր և եկեղեցին, ուր միայն մեր տէր Սիմէօնի պա-
րեկան ծայնն էր լսւում, որպէս անապատում փչող քաղցրու-
շունչ զեփիւռի հովերի, որը անկարող է շարժել կեանքը և ու-
րախութիւն սփռել իր շուրջը: Այդպէս էին այդ օր նրա մաղ-
թանքները, շարականները, մեղեդիները, որոնք միայն ասես ե-
կեղեցու պատերին էին լսելի լինում՝ բաղմութիւնը իր ծով
ցաւն ու սև դարդը ունէր:

Եկեղեցուց յետոյ բաղմութիւնը ըստ իր մշտօրեայ սովոր-
ութեան խռնուեց եկեղեցու բազում:

Դուրս եկաւ և քահանան: Ամենքը նրա կողմը զնացին:
Տէր Սիմէօնը, տեսնելով իր հօտի վիշտը, ինքն էլ թախծոտ
տեսք առաւ. բայց որովհետև իր սովորութեան համաձայն պի-
տի մի բան խօսէր, սիրտ տար, ոգևորէր իր հօտին, այդ պատ-
ճառով նախ հաղաց, միտուքը շփեց և յենուելով իր գաւազանի
վրայ, որը իրօք հովի մահակի շատ նման էր և որի մասին նա
լի պարծանքով էր խօսում թէ՛ «հասարակ գաւազան չէ, որ-
դիքս, իմ ձեռնադրութեան տարուանից սա անկորուստ ձեռքիս
է եղել և հետս էլ գերեզման պիտի տանեմ. քսան և եօթ տա-
րի է հա՛, հե՛շտ է»...

Ժողովուրդ, հիմի ի՞նչպէս է, կ'հաւատո՞ւք հօ՛ ձեր տէր-

տէրին. ախր ասած է՝ «մեծի ասած, փոքրի լսած», բայց արդեօք դուք լսել էք ինձ. ոչ երբէք,— նկատեց տէր Սիմէօնը:

— Ի՞նչ է եղել, տէրաւոր ջան, մենք միշտ հնազանդ ենք եղել քեզ. ի՞նչու ես զայլրացել.— վրայ բերեց Մելիք Վարդանը:

— Ի՞նչպէս թէ՛ ի՞նչ է եղել, օրհնած. ցասման հոտ է դալիս, հոտ:

— Աստուծոյ կամքն է,— ասաց դուքանչի Խաչօն,— տէրհայր, մենք ի՞նչ կարող ենք անել:

— Օրհնած, ի՞նչու չէք կարող անել, եթէ ինձ լսէիք, էսօր, կարելի է, էս օրինքներ դիտին չգար:

— Տէր տէր ջան, դու մեղանից պիտի գոհ լինիս, մենք միշտ քո ծառան ենք եղել:

— Ճիշտ է, օրհնած, լեզուով միշտ ծառայ էք եղել, բայց դործով՝ ոչ. Խալֆայ Յակոբ, — որին նա յանախ Խաթեցի Յովնան էր կոչում, — միտդ է, որ միշտ քեզ ասում էի՝ «Խաթեցի Յովնան, մեզ խէր չի դալ էդ դեալմաներից՝ (դադթականներից)». դրանք իրանց համար ինչ եղան, որ մեզ համար ի՞նչ լինին»:

— Է՛հ, տէրաւոր, դու էլի քո հին դարմանն ես քամուռ տալիս. ախր դեալմաները մեզ ի՞նչ արեցին և կամ նրանք ի՞նչ մեղաւոր են, որ էսօր մեր դրութիւնը էսպէս սեւաւոր է: Մարդը իր աչքը քօռ կ'ուզի. նրանք էսօր մեր մէջն են ասլորում, մի՞թէ կ'ուզեն, որ նորից ականատես լինին արիւն-արցունքի, ցաւ ու տառապանքի»:

— Ձէ, որդի, մարդի ոտն էլ պիտի խէրով լինի: Մի՛տդ է, որ նրանք եկան, ես ձեզ, բոլոր ժողովուրդիդ, զօռում էի, թէ՛ դրանց չ'ընդունենք մեր մէջ, դրանք որ կան՝ բուռն մամն են, որտեղ որ տան գլխին երեւցին, էնտեղ աւերակ կ'դառնայ:

Մինչ սրանք այսպէս խօսում էին, նրանց կամաց-կամաց մօտեցաւ իստուին մօտիկ տարիք ունեցող մի գաղթական, որը մի տարուց աւելի էր, ինչ եկել էր երկրից և որի կրակոտ աչքերում թագնուած կար մի ինչ որ խորհրդաւոր, ինչ որ վեհ: Այն օրուանից, երբ նա իր այրիացած հարսի — Մաղիկի և մի տարեկան թոռան — Ումրշատի հետ ոտք էր դրել մեր գիւղը, ոչոք նրա ծիծաղը չէր տեսել ու լսել և ոչոք համարձակ խօ-

սակցութիւն չէր ունեցել նրա հետ: Նրա հայեացքը միշտ խո-
 ժող էր ու խոժող: Նա իր ճակատի քրտինքով էր վաստակում
 իր առօրեայ պարէնը և դրանով ապրում էր պատուաւոր կեր-
 պով՝ հեռու մեր գիւղի «խէր ու շառից»: Մեր գիւղացիները
 ամենքն էլ քաշւում էին նրանից, և նա մեր ժողովրդի ամեն
 խաւերում պատկառանքով տեղ ունէր բռնած: Նա այն աներես
 դալթականներէց չէր, որոնք ստէպ-ստէպ յուսահատեցնում էին
 տէր Սիմէօնին: Ոչոք նրա լուրթեան, տրտմութեան պատճա-
 ր էր իմանում, և ամենքը կարծում էին, որ այդ բանը ա-
 ռաջ է եկել հէնց այն ժամանակից, երբ երկրից դաղթելու մի-
 շոցին ճանապարհին քրդերը սպանում են թէ նրա կնոջը և թէ
 մինուեար որդուն, Մաղկայ ամուսնուն, և այդ պատճառով
 թողան անուներ Ումրշատ է դրել, որ դոնէ դրա «ումրը» շատ
 լինի:

Եւ այդ մարդը Բուլանիցի Յունօն էր:

— Իզուր է, իզուր, տէր հայր, քո կասկածը, նկատեց
 դարձեալ Խութեցի Յովնանը:

— Ո՛չ, ո՛չ, օրհնած, գեալման ու բայդուշը մէկ են, մէկ,
 ինձ չե՛ս կարող համոզել, չե՛ս...

— Ձեր դուռը բլի, ձեր,—յանկարծ նչաց Յունօն, որը
 ուղիղ տէրտէրի աչքերին նայելով, շարունակեց,—խրշմը մզնից
 չէ, չէ. մենք չինք ընդոր պատճառը, յո՞րի վրը մըզի կ'ըւաք,
 բւացէք վրը-ձգի, օր ծուռ ճամպով ուսուցիք ձեր ըռեաթը:
 Լսինք, թէ յուրա մենք ինք գիւնաքեար, բա՞ էն քամբախ, էն
 աւեր երկիրը ո՞րնա մեղաւոր. էլի մե՞նք, հա՞: Ի՞նչա, մենք մըր
 աչքը քեօռ կ'ուղինք: Ձէ՞ էլի մըր վերան վաթան ձեր ջուռէքն
 էին, օր մզի շարդեցին-բրդեցին: Ընդոնք լէ գըզի պէս յուրանց
 աչքի գերան թողա՞՞ զուրիշի աչքի չօի կ'տեսնին. աւետարան
 թարս հասկցուցուն զմզի ու մզնից մըր սասպապ-մասպապ ա-
 ռան ու խուսարհ մաննկնիր դուրս բերին մզի: Տօ, տէր բա-
 րա, դու օր յուղէնէք մզնից ազնաւուրնիր կ'շինէիք, համա մըզ-
 նից դուք քօռ աղշիկ շիքիք, թէ չէ չնչի՞ պտի դու ու քու
 մամլաքեաթը մկալ դարգանդ քաշէք թուրքերաց: Ընդոնց Ասա-
 ւած քա՛նի հողի ա տուէլ. մէ հողի մերնա, մէկ՝ ընդոնց. սօ՛

մզնից արուն կէտայ, ըդոնցից՝ շո՛ւր: Մէկ օր էղիլինք, մէկ օր լէ կ'եռնինք, հմա թասիրով պտի մեռնինք: Ձէ թէ դախի, բէդ-ախի ցախաւելնի չամոռտիք ու գեպմաների վզին դարկիք: Էկայ էս էրկիր... հարամ էղնէր զէն դալը, ինչ աղիղ ունէնք, համ-պին թաղեցի... Մկայ յիմցար, օր դուք իք զիւնաքար մըր յու-րդա դալուն...:

Յունօյի ծայնը երերուեց. անցեալի դառնազին լիշողութիւն-ները խորտակեցին նրա հսկայական կորովը, և նա անղբայ գը-լուխը կորացրեց, իր հնամաշ չուխի փէշով սրեց այն երկու կա-թիլ խոշոր արցունքները, որոնք լուծթեամբ գլորուեցին նրա թախծալի աչքերից, որից յետոյ նա դարձեալ շարունակեց. — Տէս տէր բաբա, զիդայ շարթուց մի չէւելա, օր իրշմ բունելա մըր սար ու ծոր, հմա ձղնից սիրա մի էրող չ'կայ, օր էթա շհար, յիմնա, թէ ինչ օրի, ինչ դոպի մէշին յուրանց աղգական-բա-ր եկամները, ես չէ առաջնորդին տեսնա, խօսա զըմէն բան Դուք զէդ չ'էրիք, հմա ես կէնիմ, ես վնուցի էս գիշեր էթամ սաղսալամաթ տեղ հասնիմ, բալի խէր խաբար մի բերիմ...:

— Մինչ բազմութիւնը խորին հետաքրքրութեամբ և ամօ-թով լսում էր նրան, նա շուռ եկաւ ու հեռացաւ նրանից: Ամենքն էլ գիտէին Յունօյի բնաւորութիւնը, գիտէին, որ նա այս գիշեր պիտի քաղաք անցնի և մի լուր բերի իրանց: Ժո-ղովրդի յարգանքը առաւել ևս զօրացաւ դէպի նա: Յունօն այլևս հասարակ գեպմայ չէր նրա աչքում, այլ անծնուրացու-թեան հսկայական մի տիպար:

Ահ ու դողով լի գիշեր վրայ հասաւ: Ամեն մարդ ժամ առաջ աճապարեց իր տունը մտնել ու փակուել այնտեղ: Յունօն էլ նեքսե զնաց, փոքր ինչ հաց ու պանիր կերաւ առանց մի բան ասելու հարսին, որը իր Ումըշատին նոր էր քուն դրել և օրօրոցի կողքին նստած ծանր ու դաժան խոհերի տակ հալումաշ լինելով ու անդադար երերուելով, լուիկ-մնչիկ կար էր անում:

Ընթրիքը վերջացնելուց յետոյ Յունօն դարձեալ անխօս վերկացաւ, իր զէնքերը բերեց, փորձառու մի հայեացքով տնդեց նրանց, ապա իւրաքանչիւրը իր որոշ տեղում կապեց վրան, յետոյ դարձաւ դէպի Մաղիկը:

—Մաղիկ լաօ, մկա ես կէթամ շհար. դուռ ու մուռը զարաղ կ'փակիս ու արխալին կքնիս. ես քաւոր Ղըրօյին թամբէ երէրիմ, օր մուղաթ եղնի մըր դուռ ու երթիսին, չուրի ես իդամ. լուսուն ինչ կայ, չ'կայ էնտեղ կիմնան, մէկ էլ գիշեր լէ կ'դառնամ, ասաց ու դուռս գնաց:

Մաղիկը չ'խօսկան էր ակէսրարի հետ, հենց դրա համար էլ չ'կարողացաւ հարցնել նրան թէ՝ ո՛ւր, ի՞նչու համար է գնում: Երկար նա լուռ մնաց նստած, վերջապէս որ զգաց, գիշերից բաւականին անցել է, առասնց հանուելու, պարկեց քնելու, չ'մոռանալով նախօրօք դուռը ամուր փակել:

Զարտուղի ճանապարհներով մերթ խորին զգուշութեամբ առաջ ընթանալով, մերթ կանգ առնելով, դետնի վրայ պարկելով և ոտքից զլուխ լսելիք դառած ականջ դնելով այս ու այն նոյնիսկ թեթեւ շշուկին, շարունակեց Յունօն իր ճանապարհը մինչև հասաւ քաղաքի այգիներին մօտ: Այստեղ նա դարձեալ մարադ մտած կատուի նման պարզուեց գետնին, երկւոր-երկւոր ականջ դրեց՝ հեռուից թուրքերէն խօսելու փսփսուկի ծայներ էր ականջին զարնւում. սակայն, դժբախտաբար, անկարող եղաւ մի բան որոշել այդ խօսակցութիւնից. միայն եկաւ այն եզրակացութեան, որ թուրքերը այնտեղ խիստ հսկողութիւն էին նշանակել, ուրեմն այն տեղից քաղաք մտնելու յոյսը ապարդիւն էր: Նա նոյնպիսի զգուշութեամբ անցաւ քաղաքի միւս ծայրը, դարձեալ պահապանների հանդիպեց: Այստեղ նրանց թիւը աւելի շատ էր, որովհետև այդ մասումն էին գտնւում խանի ապարանքը: Անցաւ մի ուրիշ ծայր՝ դարձեալ պահապաններ: Վերջապէս, ուր որ գնաց, հանդիպեց պահապանների: Թուրքերը, որպէս զի արգելեն հայ զիւղերից քաղաքի հայերին օգնութեան գալը, վաղօրօք բռնել էին ամեն մի ծակ ու ծուկ: «Թֆու, փնթփնթաց Բուլանխի հական, - զձեր հօր գաղտը անիծուի. իմա՛ ես փաթիլ զչորս կողմը. հմա չէ, իշու զաւկներ, ես ձրն եմ, ես ձեր ղէրկթէ բադաններուց լէ. կ'ընցնիմ. ընծի Բուլանխի Յոռնօ կ'ըսին Յունօ...»

Ասաց թէ չէ, ոտքերի չշտերն ու վարտիկը հանեց, կապեց մէջքին և մտաւ մօտակայ տնուակը, որը անցնում էր քաղաքի միջով:

Այստեղ նա կռացաւ, դրեթէ հաւասարուեց ջրի մակերևութին, որի բութը եղերքները պաշտպանում էին նրան դիտող աչքերից, և ալգայէս կուղէկուղ շարունակեց իր ճանապարհը մինչև հասաւ քաղաքի հայկական թաղը: Փոքր ինչ շունչ առնելով ջրի մէջ, նա դարձեալ իրան յատուկ զգուշութեամբ նստեց առուակի եղերքին, հազաւ իր չշտերն ու վարտիկը և պատերի ստուերների մէջ կորչելով, որ նշմարողներ չլինեն, շարունակեց իր ճանապարհը: Այսպէս քիչ առաջ անցաւ թէ չէ, մէկ էլ հեռուից տեսաւ դէպի իրան եկող մի քանի մարդկանց: Ծոփ արագութեամբ նա ցատկեց մօտակայ ծառի վրայ և կորաւ նրա սաղարթախիտ տերեւների մէջ: Այլ ևս ուրիշ ելք չկար: Բարեբախտաբար, նրան նշմարել անկարող եղան անցնող թուրքերը: Որքան նա ուզեց իջնել և առաջ շարժուել, անկարելի եղաւ, ամեն անգամ փողոցով անցնում էին թուրքեր և ինչ որ բաներ էին նշանակում հայերի թէ տների և թէ խանութների դռների վրայ, որ հեշտութեամբ իրանց դաղանային ծրագիրը իրագործել կարողանան և չճիթեն նրանց թուրքերի տների հետ: Այսպէս մինչև առաւօտ նա մնաց իր ծածկավայրում աննշմարելի:

Առաւօտեան նա փողոցում ոչ մի հայ չտեսաւ: Նրանք մի քանի օր էր, ինչ փակուած էին իրանց տներում: Բայց մի քանի միամիտներ հալած իւղի տեղ ընդունելով տեղական խաների և փոխդնդապետի գլխովին երաշխաւորութիւնները, դիշերհանայ գնացել էին շուկայ և խանութ էին բաց արել: Մինչ Յունոն արեսպարում էր առաջ ընթանալ դէպի յաջորդարան, յանկարծ խաների ապարանքից լսուեց չարագուշակ հրացանի որոտը - աղբանշանը և շիկացած արծիճը սուլելով ու վզգալով անցաւ քաղաքի մի ծալրից միւսը. դրան իբրև պատասխան որոտաց երկրորդ հրացանը մէշիդից, որից յետոյ միաժամանակ քաղաքի հաղարաւոր անկիւններից լսուեցին բազմաթիւ հրադէնների որոտումներ և զազանացած թուրք խուժանը սկսեց շուկայում եղած մի բուռն խաղաղ հայերի կեանքը սմարդարար կարճել, կոտորել ու սլրել առանց որևէ արդելքի պատշաճաւոր իշխանութեան կողմից: Սպանութիւնների հետ միաժամանակ սկսուեց և հայկական շուկայի ալան-թալանը և հրդեհը:

Յուճոն Ֆնաց քարացած. յարձակումը այնքան անսպասելի էր նրա համար, որ նա չ'իմացաւ թէ՛ ինչի պիտի ձեռնարկէր։ Այլ ժամանակ նրան ուշքի բերեց թուրք ամբոխի մոլեղին և զիւային քրքիչը, որը հարաւ-հրոցով շրջապատել էր սեղական հալ հարուստներից մէկի տունը, ուր պատասպարուել էին քսանից աւելի ընտանիքներ քաղաքի հալ աղքատ խաւերից, և գերմարդկային ճիղեր էին թափում ներս խուփել և կողոպուտի ենթարկել նրա ունեցած-չունեցածը ու առւանգել այնտեղ պատասպարուած հալ հրաշաղեղ օրիորդներին, որոնց հմայիչ գեղեցիկութիւնը խելացնոր էր արել երիտասարդ սրիկայ թուրքերի ուշ ու միտքը։ Տարաբախտ պատժուածների զիմադրութիւնը այնքան էլ զօրեղ չէր, այլ պատճառով եթէ օգնութեան չ'զարմի հոգի ուժ, դռների խորտակումը անուրանալի էր։ Մինչ դժոխային ցնորքներով հարրած խուփանք „եա Այի“ էր ճշում և ուժեղացնում յարձակումը, որտեղից որ էր ոչ հեռուից, մի կիսախարխուլ շինութեան աւերակներից որոտաց հրացանը, և երկու թուրք գետին գլորուեցին։ Ունենալով ուժեղ դիրք՝ որտալ կրկնուեց մի քանի անգամ, խլելով պաշարողների ստուար շարքերից զոհեր։ Մի քանի րոպէ ևս . . . և թուրք կատաղած խուփանք իրար վրայ թափ-թփուելով զիմեց փախուստի։ Հրացանաւորը իր ժածկավալից դեռ էլի երկար նրանց լեռնից շարունակեց իր գործը, մինչև փողոցը իսպառ մաքրուեց այդ փրփրոտած ամբոխից։ „Ըհ, ձեր թարեղնի անիծիմ, դէ՛հ մի փախէք, էհ, վիրն իք բռնատ էկէ“։ Հրացանաւորը Յուճոն էր, որին ամբոխի քրքիչը ուշքի բերեց, և նա դիրք մոնելով մօտակալ տան աւերակներում փրկեց պաշարուածներին անխուսափելի մահից և թերևս խալտառակութիւնից։

Մինչդեռ այդ ժամին քաղաքի շուկայում թուրք սարրը այնպիսի չ'սեռնուած ու չ'լրացած գաղանութիւններ էր գործ դնում իր ճանկը ընկած դժբախտ հայերի գլխին, որի մի առ մի նկարադրելը երբեք պատիւ չէ բերում մի ազգի, որը կոչւած է ապրելու և որը կապուած է ընդհանուր մարդկութեան հետ անխղելի կապերով և նրա օղակներից մէկն է կազմում։ Նրա կատարած մոլեղին սխաղործութիւնները աններելի է և այն

կառավարութեանը, որի հզօր հովանու ներքոյ իրականութեան հողի վրայ են դրուել այդ արիւնոտաշտ ազգի նոյնքան արիւնոտ երեակայութիւնները: Այն ինչ մենք և մեզ հետ շատերը, որոնք լուրջ ուսումնասիրած են թուրք ազգի հոգեբանութիւնը, կասեն, որ բաւական էր կառավարութեան մի անկեղծ սպառնական հայեացք, և հաղարաւոր թուրք փրփրոտած ամբօխ միան ծակը մտած կ'լինէր և երբէք երեսն չէր բերիլ իր գազանային լի բռնկումներով հակումները, որին, դժբախտաբար տկանատես եղանք: Իրանք թուրքերն են այժմ ասում «մի կաղակի անկեղծ ներկայութիւնն էլ բաւ էր սարսափ ազդելու մերոնց վրայ, բայց այդ չ'կար:» Սակայն, ցաւօք սրտի, պէտք է ասել, որ հայի համար անցել են վաղուց այն երջանիկ ժամանակները: Եւ այժմ նա զրեթէ տէր չէ համարւում ոչ իր տնձի, ոչ իր սեփականութեան և ոչ իր պատուին:

Դառնանք դէպի մեր պատմութիւնը:

Թուրք փրփրոտած և խաժամուժ ամբօխ, ինչպէս շեշտեցի, նպատակ էր դրել նախ՝ որքան հնարաւոր է, կոտորել հայ մեծամեծներին, իշխաններին և հարուստներին, ապա թալանել նրանց ունեցածը: Եւ այսպէս, նրանց մի ստուար վոհմակ շրջապատեց քաղաքի առաջնակարգ հայի՝ Պ. Աբամեանի խանութը: Թուրք խաները և փոխգնդապետը ամենից առաջ այս բարեպաշտ հային էին համոզել ու երաշխաւորել, որ սա անպատճառ բաց անի իր խանութը, հաստատ իմանալով, որ նրան կ'հետեւեն տասնեակ ուրիշ վաճառականներ: Եւ իրօք այդպէս էլ եղել էր: Այժմ էլ այս միամիտ ծերունին էր ամենից առաջ զոհ գնում նրանց դաւադրութեան:

— Ինչ ասում ենք, բաց դուռը—ծնում էր թուրք մոլեգին ամբօխը:

— Իսէր Այիին, 'ի սէր Մուհամէդին և վերջապէս 'իսէր մեզ ու ձեզ ստեղծող Ալահին՝ ձեռք վերցրէք ինձանից. ջանմ, փող էք ուղղւում, ահա՛ ձեզ փող՝ երեք հազար միայն նաղդ ունեմ, եթէ դա քիչ է, ամբողջ խանութս ձեզ կ'տամ, վէկսէլ կ'տամ, որ վաղը որքան ուզէք տամ, միայն թէ խնայէք մեզ. ախր ինձանից ի՞նչ վատութիւն էք տեսել դուք, չէ՞ ձեզ համար բարեխնամ հայր եմ

եղել, — ներսից նուաղած ծայնով աղերսում էր Ադամեանը:

— Քեաւթառ շուն, ասես չ'ասես, էդ բոլորը մերն է: Ի՞նչի պիտի քեզ էդքան լինի, իսկ մեզ՝ ոչ:

— Այ դարդաշներ, խօս չ'եմ գողացել, ճակատիս քրտինքով եմ վաստակել, միթէ դուք չէք իմանում, որ կեանքումս մի ճանճ էլ կոխ տուած չ'կամ:

— Սուս, անդա՛մ, — աւելի զաղանացած դռում էր ամբողջը, դուռը բաց:

— Երդուեցէք Սլիի գլխով, բաց անեմ:

— Տօ շուն, դու մեր գլխի աէրը դարձար, որ երդում ես պահանջում. քեզ բան չ'ենք անում, մեզ փէսէդ Յովսէփն է պէտք, Թանգիօլն օղլի:

— Իսէր Ալահի, ինձ սպանէք, նրան՝ ոչ: Նա չ'ահել է, կին-երեսներ ունի, աղերսում էր դառնագին ծայնով Ադամեանը:

— Տօ քեօպակ, մեզ հենց չ'ահիլներն են պէտք. կնոջ համար դարդ մի արա. նրան տանելու ենք, մեզ հենց էնպիսի խանմներն են պէտք:

— Այ ամօղլիներ, որ էդպէս է, չ'եմ բաց անիլ, սոված ծարուս էստեղ կ'մեռնեմ և ձեր ձեռքը չ'եմ ընկնիլ:

— Հա՛, լաւ . . . ճաց խուժանը, հաշի, — դիմեց նա իրանց ղեկավարին — այրենք խանութը:

«Այրել» բառը մի սոսկում յառաջ բերեց թշուառ պաշարուածների վրայ, և նրանք փոքր ինչ լետոյ եկան այն եզրակացութեան, որ կամայ-ակամայ պիտի դուռը բաց անեն, այդ պատճառով Ադամեանը շարունակեց:

— Այ քրովաներ, միթէ դուք իմ աղ ու հացը չ'էք կերել, ի՞նչու էք էդպէս անում. խոստացէք մեզ ազատ թողնել, ես դուռը բաց անեմ, մանաւանդ, որ Յովսէփը էստեղ չէ, — Յովսէփին նա ուղեց պահել տախտակների տակ, ենթադրելով, որ քաղցած խուժանը ապրանքի վրայ կ'պրծնի և ձեռք չի տալ տախտակներին, իսկ Յովսէփը կ'ազատուի և դիշերը տուն կ'փախչի:

— Խոստանում ենք, դէ՛հ, բաց, աղաղակեց ամբողջը:

— Հայրիկ, մի բաց, կ'խաբեն, ես էդ խարդախ շների հոգին վաղուց եմ փորձել, — նկատեց Յովսէփը:

— Ա՛խ, ծեր աղուէս, բա էդ ո՛ւմ փսփսոցն է, ճշաց հա-
ին, — ա՛յ, տղերք, նաւթ ածէք դռան վրայ:

— Զէ, հաջի, լաւ կ'լինի շարդենք դուռը լոմով — ասաց
միւսը:

— Դէ՛հ, լաւ... համածայնեց հաջին:

Սկսեցին դուռը շարդել: Դժբախտ Ադամեանը արտա-
սուքը աչքերին սկսեց աղօթել. սակայն Յովսէփը բոպէական
լուսթիւնից յետոյ ձեռքը դրպանը տարաւ և իր ատրնանակը
դուռս բերեց. «պիտի մեռնեմ մարդավայել մարով. իմ նախնիքը՝
Սիւնեաց քաջերը, ամեն անգամ այդպէս են դիմաւորել մահին
և այդպիսի մարով կ'ընել իրանց վախճանը,» — ասաց ու խա-
նութի փոքրիկ լուսամուտից պարպեց ատրնանակը դէպի տա-
բոխը: «Վա՛յ, վե՛լ,» — աղմկուեց խուժանը և վայրկենաբար ցառ
ու ցրիւ եկաւ ու սկսեց փախչել, — ա՛յ, քո լիւր հաւատն անի-
ծով՝ հաջուն սպանեց, Ալաքպարն էլ վիրաւորուել է. սոօ,
անամօթներ, ո՛ւր էք փախչում, սրանից յետոյ մի՞թէ դրանց պի-
տի սաղ թողնել, — կշտամբեց ամբոխին Մաշադին: Խուժանը
դարձեալ խռնուեց դռան մօտ և սկսեց շարդել դուռը: Ներ-
սից ատրնանակը դարձեալ որոտաց, դարձեալ հարուածը ան-
շեղ էր: Երկու ժամ այդպէս շարունակուեց անընդհատ կռիւը:
Բայց աւա՛ղ, Յովսէփի փամփուշտները վերջացաւ: Այս անգամ
նա խանութի արագին մուրճը ձեռքն առաւ և կանգնեց դը-
ռան մօտ: Մի քանի բոպէից յետոյ դուռը խորտակուեց և կա-
տաղած ամբոխը ներս թափուեց: Առաջին մտնողը զո՛ր գնաց
մուրճի շեշտակի հարուածին: Երկրորդը՝ նոյնպէս, երրորդը՝ նոյն-
պէս: Տեսնելով բանն ինչու՞ն է, խուժանը գրո՛ր տուեց և
միանդամայն նեքս և խուժեց: Դժբախտ երիտասարդը ընկաւ
այդ անհաւասար կռոււմ. ընկան և միւս երկու-երեք պրիկաշ-
չիկները: Ադամեանին դեռ չէին սպանել: Բոլորից յետոյ նրան
խանութի մէջ տեղը բերին:

— Քեզ, ինչպէս խոստացել ենք, չենք սպանելու, եթէ մի-
այն մեր պահանջը կատարես, նկատեց Մաշադին:

Ադամեանը լուռ էր:

— Ի՛նչու չես խօսում, կրկնեց իւր հարցը Մաշադին:

Դարձեալ նա լուռ մնաց:

— Ի՞նչու չես խօսում, դեռ լեզուդ չենք կտրել:

— Ախր էլ ինչ խօսեմ, ինչ ուզում էք արէք, մըմնջաց Ադամեանը, որին հետզհետէ սկսեց խօսեցնել Մաշադին:

— Մի վախիր, ոչինչ չենք անի, եթէ մեր պահանջը կատարես, որը ոչ թէ մեր պահանջն է, այլ մեր խանի:

— Ինչ է, ինձ համար այսուհետեւ բոլորը մէկ է. մեռնելը լաւ է:

— Սուս, հերիք է դուրս տաս. դու մի նամակ գրիր կնոջդ, որ նա վերցնի իր հետ իր երեխաներին, աղջիկներին և մեզ հետ դնայ խանի տունը. խանին միայն քո մարալ աղջիկդ է պէտք, իսկ մնացածներին անվորժ և անվտանգ կ'պահենք. քեզ էլ՝ նամակ գրելուց չետոյ կ'տանենք դարձեալ խանի տուն, ձերոնց մօտ:

Ադամեանի տունը լինելով հայկական մասում, թուրքերը չէին կարող ապաշխարայ յարձակուել նրա վրայ, որպէս զի նրա գեղանի աղջկանը կորդէին, այլ դիմել էին այս միջոցին:

— Սրիկայ Մաշադի, եթէ մաս-մաս կոտորելու էլ լինէք, նկատեց հաստատամիտ ծայնով Ադամեանը, — ես այսքանից չետոյ չեմ ցանկանայ, որ իմ ապականուած շունն էլ կենք զրտնի այդ խանի յարկի տակին: Ես նզովում եմ մարդկային նզովքի անհուն դառնութեամբ և զզուանքով այդ խանի աղ ու հացը, որ պատճառ դարձաւ այսքան անմեղ արիւնների: Ես քրիստոնէական անշեղ հաւատով գուշակում եմ, որ կգայ մի օր, մի ժամանակ, երբ նա իր պատճառած այս ծովարիւն-արտասուքի պատճառով պատասխան կըտայ երկնքի արդարադատութեան և իր արժանի պատիժը կ'ստանայ. այժմ այս քամբողդ աշխարհում, այս խարդախ, այս նենգամիտ լուսնի տակին, նրա համար պատիժ չկայ. նա ազատ է իր սխրագործութիւնների մէջ. նա կատարում է այն, ինչ նրան թելադրում են, ինչ նրան հրամայում են... նրա ծայնը բերանում մնաց՝ դաշոյնի անխնայ հարուածը բոպէաբար գետին թաւալեց նրան: Մահը վայրկենական էր:

Սրա վիճակին ենթարկուեցին եղբ. Խալաթեանները, որոնց խանութները կողոպտելուց չետոյ դիակները պրեցին: Այս-

պէս այդ օրը քաղաքում 50—56 անմեղներ և ամբողջ հայկական շուկան դո՛ւ գնացին թուրքերի դադանութիւններին:

Հետևեալ օրը խանի մուսնետիկները կայծակի արագութեամբ թռան շրջակայքի թրքական դիւղերը աւելի խաւարածիա թուրք գեղջուկին ոտքի կանգնեցնելու, որից լետոյ սկսուեց հայկական դիւղերի ջարդը, ալան-թալանը սոսկալի հրդեհներով և եկեղեցիների սրբապղծութիւններով, որոնք ժամանակին մանրամասն լոյս են տեսել մեր պարբերական մամուլի էջերում:

Յունօն տեսնելով քաղաքի բարբարոսական ջարդը, սահմա-բեր սպասում էր գիշերուան, որ կարողանայ մի կերպ իրան դր-ցել իրանց դիւղը:

III


Գիշերային մթաշաղ խաւարը մերթ-մերթ փոփոխում էր իր սրտամաշ երեսը և լուսաւոր տեսք ստանում. երբեմն էլ այնքան էր թանձրանում, այնքան վիատեցուցիչ դառնում, որ կամայ-ակամայ տմբողջ էութեամբ փշաքաղւում էիր ու սոսկումների, երերումների գիրկը ընկնում: Գիշերուայ այդ տաղ-նապալից պահուն ոչ թէ ծաղիկի նման սև դարձով լի պանդուխտ կանաչք, այլ նոյն իսկ աժդահա տղամարդիկն էլ շէին սիրտ անում դուրս մնալ և մանրազնին հետաքրքրութեամբ ուշքի առնել թէ՛ ինչ է կատարւում իրանց շուրջը և կամ դեռ ինչ է կատարուելու: Վաղուց, շատ վաղուց նախադու-շութեան ցտնկալի ոգին մրափել, մեռել էր մեր թշուառ գեղ-ջուկի գիտակցութեան մէջ, և նա իր սևաւոր ճակատագիրը, բաղդը գիտակից աչքերով տնօրինելու, որոշ հիմքերի վրայ դր-նելու ընդունակութիւնից զրկուել էր: Պէտք էր մի ուժեղ հար-ւած, մի ուժեղ ցնցում, որ նա իր բնածին ինքնուրոյն թա-փով ոտքի կանգնէր և իր տարեգրուած բաղդի ղեկը իր ձեռ-քը առնէր և ըստ այնմ չափէր ու ծնէր իր հալածուած կամքը, իր բռնադատուած, ոտքի տակ տրուած և անսասան անդգալութեամբ ցեխերի մէջ շաղախուած դարաւոր իրա-

ւումքը: Եւ այժմ զանազան միջին ու չարոգի ինտրիզանների ստոր դաւադրութեամբ պատրաստուել էր այդ սնխնայ, այդ անսիրտ հարուածը, որը միանգամայն սթափեցրեց թէ մեր բոլոր նախկին հակառակորդներին և թէ մեզ, որ հայ ազգը այնքան էլ հեշտ կուլ տալու պատառ չէ: Դարեր էին կռել-կոփել այն տարաբաղդ ազգի ճկուն և դիմացկունութեան ոգին, որը այն սեւ ու մուրթ դարերի ընթացքում անցել էր մարդկային յոփեց բարձր հալածանքի բովից և ճաշակել էր արիւն-արցունքով լի բաժակի դառնութեան լեղին: Պէտք էր պահուած մոխրի կոյտների տակից դուրս բերել ազգային ինքնագիտակցութեան դարերով սրբազործուած ոգին, որի համար քիչ եղան մեր ճառերն ու քարոզները, և այն արեց մեր ստորաքարշ ոտխար:

Եւ այսպէս, ահեղ փոթորիկը դիզուել էր. համայն հայութեան գլխին, որին, աներկբայ եմ, գիտակից էր և կառավարութիւնը: Միայն ինքը, տարաբաղդ հայութիւնն էր անտեղեակ, միայն նա էր վստահ, որ թաթարական, Լէնկ-թիմուրական արշաւանքները ու ալան-թալանը անդարձ կորել էին:

Սակայն այսպէս չէր դժբաղդ Մաղիկը: Նա ասես զգուժ էր, որ օդում մի ինչ որ արտասովոր իրարանցում է տիրում. լսւում են հազար ու մի շշուկներ, փսփսուկներ, լռիկ-մնչիկ պատրաստութիւններ, և այդ բոլորից նրա անարատ, նրա չքանաղ, բայց դարդով լի սիրտը փշաքաղւում էր ու տալն ու վերայ լինում: Նա այն վերան վաթանում շատ էր նման արիւնադի տեսարանների տկանատես եղել. շատ էր նրա կարմիր հորիզոնում վիրաւորանքների ենթարկուել նրա կանացի թոյլ ու նողանքով լի սիրտը. շատ էր նա արիւն արտասուք քսամել իւր սեւորակ աչերից և այժմ նա, ասացի, փշաքաղւում էր, երբ զգում էր, որ միևնոյն ծով, միևնոյն անտակ վիշտը, ցաւոտ իրականութիւնը պիտի կրկնուէր և այստեղ: Ել ի՞նչու թողեցին հայրենի այն նուիրական վայրերը, էլ ի՞նչու անարգուած անտէրութեան մատնեցին հայրենի երկրի դարաւոր օջախը, երբ այստեղ էլ մի հզօր քրիստոնէայ դահակալի նոյնքան հզօր հովանու տակ պիտի նոյն արիւնը, նոյն ցաւ ու տանջանքը, վիշտ ու տառապանքը և պատուի անարգանքը կրկնուէին: Այսպիսի պարագաներում անհատի սիրտը լցւում է աննկարագրելի մի դառնութեամբ և կամաց-կամաց փնտրում է իր նման մէկին, որ-

4582 ՊԱ-1228



պէսզի բաժանի նրա հետ իր չարքաշ մտատանջութիւնները: Բայց միթէ գիշերուայ այն պահուն այդ բաղդից հալածուածը կարող էր իր նման մէկին գտնել ու խօսել նրա հետ: Եւ մենակութիւնը ճշող էր ու սոսկալի: Յաճախ լինում էին նոյն իսկ այնպիսի ըոպէներ, որ նա ախ ու վախով էր նայում իր շուրջը: Վերջապէս, սարսափով լցուած մօրը այդ անել դրութիւնից, այդ տաղտկալի անճարութիւնից դուրս բերեց նրա Ումրշատը. նա զարթնեց, ծիծ էր ուղում: Սիրելի զաւակի քաղցրիկ ճիւղ ցրեց մօր ուղեղից այն սև մշուշը, որի սակ նա տանջւում էր: Նա ամեն բան մոռացաւ և սկսեց դուրեւ գուրգուրել իր սիրուն զաւակին և ծիծ տալ: Ծիծ ուտելուց յետոյ, նա չքնեց, խեղճ մայրն էլ հէնց այդ էր ուղում. նա իսկոյն հագցրեց իր աննման զաւակի շորերը և սկսեց զբաղուել նրանով: Որդու իւրաքանչիւր ճիւղ, ուրախ ծիծաղը որքան ուրախութիւն էր սփռում դարպաս մօր սրտի վրայ, նոյնքան աւելի ցաւ էր պատճառում նրան. չէ՞ որ որդու ներկայութիւնը յիշեցնում էր նրան իր թառլան, իր բէմուրազ ամուսնուն, որին նա հայրենի երկրի նահապետական պարզ սիրով սիրել ու առել էր: Այո՛, այդ որդին շատ բան էր դժբաղդ մօր համար. երբ նրան տեսնում էր, ասացի, որ նրա կրակոտ յիշողութեան մէջ պատկերանում էր իր սրտի պաշտած «եարը» իր առնական տեսքով, որի հետ և շաղկապուած էր նրա անուշ հող ու ջուրը, հայրենի դրախտանման սար ու ծորը, իրանց հմայիչ, իրանց աննման երկինք-գետինով. մի խօսքով, նրա ներկայութիւնը յիշեցնում էր նրա սգով լի արիւնով տուն-տեղը՝ Բուլանխը: Էլ ի՞նչ կալ անհատի համար այնքան պաշտելի, քան սիրած «եարը» և հայրենի-երկիրը: Եւ այն երկու բարոյական բարձր զգացմունքների ներկայութիւնը նա տեսնում էր իր փոքրիկ Ումրշատի մէջ: Չկար այժմ իրբէզի նման կորած «եարը», չկար և իւր սեւաւառը Վաթանը: Չէ՞ որ ամեն անգամ երբ նա յիշում էր Բուլանխը, անցած կեանքի նուիրական պատկերների մի անսպասելի օղակ շարան-շարան գալիս էին ու անցնում նրա վարկուն երեւակայութեան մէջ: Էլ ի՞նչեր չէր տեսնում այդտեղ թշուառ կինը, անդարդ անմեղ իր մանկութիւնը, երբ ինքը դառներ

յետեին սիգուէտ, հազար ու մի բուրմունքով լի ծփացող հովիտն էր աճապարում ու թռչում-թռչկոտում նրանց յեակից, ապա խմբական խաղեր սարքում իր ընկերուհիների հետ:

Որքան քաղցր ժամեր էին դրանք...

Կամ, երբ կուժն ուսին, ինքը ջրի էր դնում, հաւատացած լինելով, որ «նրան» անպատճառ աղբիւրի գլխին մարազ մտած կրտեսնի. էլ ի՞նչ հողեկան խորունկ բերկրութեան հովերով չէր բուրում չէր համակուտւում նրա կուսական չքնաղ սիրտը և կամ ի՞նչ գերագոյն կրակով չէր տապակւում, չէր այրւում-խորովւում նրա նազելի էութիւնը... Ախ, որքան երջանիկ ժամեր էին... Եւ կամ Բուլանխի այն նահապետական հարսանիքը, երբ ինքը զուգուած, զարդարուած Գեօնդի մէջ պարում էր ու աչքի տակով թամաշ անում, թէ «նա» ի՞նչպէս է ջրինդ տալիս, գլուխ-կօնծի կանգնում ծիան վրայ և այդ բոլորը դարձեալ իր սիրու համար:

Այժմ ո՞ւր են այն բոլորը...

Անցեալի նուիրական պատկերները որքան էլ գողտրիկ օրօրներով ու շնչով են բուրում, դարձեալ նրանք մի ինքնուրոյն հիասթափութեան ու դառնութեան են մատնում անհատին, երբ նա լիշում է այդ բոլորը:

Այսպէս էր և Մաղիկը: Նա տխրեց և թախծոտ լի մաղծը իր խռովալոյզ նաւի վրայ նրան շատ հեռու տարաւ, ուր նրա սիրտը իր ամբողջ էութեամբ ալէկոծւում էր և մրկածովի շառաչիւն արձակում: Եւ նա ակամայից սկսեց դնդնալ Բուլանխի իր մանկութեան երգերից.

Երկինքն ամպելա ամպով,

Եարիս թաղել եմ ճամբով,

Չմեռայ քեզի յապով,

Ումրօ, լուրիկ, գառն լուրիկ...

Ումրշաղը ակնապիշ եղած ասես հասկանում էր բառ առ բառ մօր երգը: Տեսնելով Ումրշաղի այդ դրութիւնը, Մաղիկը մէկ խօսում էր որդու հետ, մէկ իր երգն էր երգում:

«Բա՛, Ումրօ չան, իմ ումրօ ու արեւ քզի յապովա, լաօ, իմ խոզի»:

Որդին ծիծաղեց:

Մայրը շարունակեց,

Բուլանիս ծուխ ու մուխ էր.

Իմ սիրածը շատ թուխ էր.

Ափսոս, մահը կանուխ էր...

Ումբո լորիկ, ջանձ լուրիկ...

Ընկալ չօրէջօլ աէյրան,

Պատուեցի հազիս դէյրան

Ես ու էն քլի հէյրան,

Ումբո լուրիկ, դառւմ լուրիկ, ջանձ լուրիկ...

«Ախ, լաօ, Ումբո ջան, հա, հա, բալայ, ես ու էն, էն սեւաբաղդ հէրդ, քլի դուրբան, քլի հէյրան: Օր դու չիղնէր, ես մկայ շուտուց էնք մեռել»:

Որդին լուռ էր, թուռ էր, թէ նա զգում էր դժբաղդ մօր հոգեկան դրութիւնը և թախծոտ աչքերով նայում էր նրան:

«Ախ, էն ջանիդ մեռնիմ, կ'սիս թէ կըխասկնայ, թէ ինչ կսիմ»:

Ումբո, լաօ, ջօջացիր,

Մօրդ դարդեր հասկըցիր,

Սրտիս եարէն իմացիր,

Դարդիս դարման, լաօ, ցաւիս դարման, Ումբո, լուրիկ...

Դժբաղդ այրին սկսեց հեկեկալ. արտասուքը լռութեամբ զլորուում էր նրա սևորակ աչքերից, որոնց պղտոր տեսքը արտայայտում էր նրա հոգու անհուն տագնապը և խռով դրութիւնը: Այդ բոպէին նրա փոքրիկը լիշեցնում էր նրան շատ բան, հետեապէս և նա դառնութեամբ կցուած, իր ալեծուփ նաւի վրայ դնում էր հեռու, շատ հեռու: Սակայն այն անորոշ դրութիւնը տևողական չէր, հէնց այդ որդու իւրաքանչիւր հալեացքը, շարժումածը լցնում էր նրա սիրտը անսահման բերկրութեամբ, ուր նա տեսնում էր իր միակ մխիթարութիւնը: Նա սիրող մայր էր: Նա կռացաւ, շերմազին շրթունքներով համբուրեց որդուն, ապա շարունակեց իր երգը, իր լուրիկը.

Էրնէկ, լաօ, էն օրուան,

Գեզի բերի մեր թովլան,

Ուտեցուցի տաք շորուան

Ումբօ, լուրիկ, գառօ, լուրիկ...

Ի՞նչ եղան էն օրեր:

Սրտիս սաւդէնա կորել,

Սիրաս էրիր սև հորել.

Ումբօ, լուրիկ, ջանօ լուրիկ...

Ե՞րբ կիզայ էն դարուն,

Էլիկա տեսնիմ անարուն,

Ծաղկով ծաղկած դալարուն,

Ումբօ, լուրիկ, գառմ լուրիկ...

Յանկարծ հարիւրաւոր հրացանների որոտը ընդհատեց թըշ-
լառ կնոջ ծայնը, և նա սարսափահար եղած՝ ոտքի թռաւ և
որդուն ամուր դրկած՝ շանթահար եղածի նման մի քանի րոպէ
մնաց անշարժ կանգնած: Հրացանները շարունակեցին անընդ-
հատ որոտալ, և հաղարաւոր դռոււմ-գոչիւնների, լաց ու ա-
ղաղակի ծայները թնդացրին օդը իրանց դառնաղին սուգ ու
շիւանով:

Մէկը ճշոււմ էր. «վա՛յ, էրեցին»։ միւսը «վա՛յ, վա՛յ, աղչ-
կաս տարան»։ Երրորդը՝ «աման, մի՛ մորթէք, մի՛ սպանէք»։
Այդ ընդհանուր խառնաշփոթութեան մէջ մերթ-մերթ լսոււմ
էր թրքական խաւար ամբօսի ոգևորիչ աղաղակը՝ «Եւա Ալիիի...»
Վերջին բազմածայն կոչը ասես պարզեց Մաղկան թէ՛ բանը
ինչու՞մն է, և նա իւր Ումբօշադին ամուր կպցրած կրծքից դուրս
թռաւ, որ ինչպէս և լինի իրանհասցնէ քաւոր Ղզրօյենց տունը:

Դեռ նա բազի դռան չհասած՝ «բռւմ», լսուեց հրացանի
որոտը, և տարաբաղդ կինը, ստանալով մահացու վէրք. գլխից,
վայրկենաբար փռուեց գետին: Փոքրիկ Ումբօշադը մի սուր ճիչ
արծակեց ու լռեց. նա ամուր բռնել էր մօր պարանոցը և
պոկ չէր գալիս...

Փոքր ինչ լետոյ, ողջ գիւղը հրդեհի մէջ էր: Բնակիչները,
որը սպանուեց, որը փակուած մնալով իր սեւաւոր յարկի տա-
կին՝ կրակի ճարակ դարձաւ, որը մի կերպ փախաւ և ապագան
գտաւ մեր հարեան բազմամարդ հայ Շ... գիւղոււմ, որից լետոյ
ալան-թալանը իր սոսկալի գոյնով շարունակուեց:

Մի քանի ժամից լետոյ, այդ շէն գիւղը ներկայացնում էր աւերակների և կրակի մի ահուելի կոյտ:

Կեանք ասած բանը այլևս գոյութիւն չունէր այնտեղ:

IV.

Մարդկային անիրաւութիւններով յղիացած լուսինը մերթափի դուրս էր բերում իր վախլուկ երեսը խոժոռած սև-սև թուղպերի շերտերի արանքից, անփոյթ աչքերով դիտում այն ամեն չարիքը և արիւնոտ պատկերները, որոնք անխնայ բռնել էին մեր սար ու դաշտը, ապա նոյնքան ցաւոտ ցոլքերով խորատգւում ամպերի թանձրութեան մէջ, որից լետոյ դարձեալ անվերժանելի աղշամուղշը իր դիրկն էր առնում մեր տնջացող, մեր արիւնյուտայ սար ու ձորը: Ոչ մի ծայն, ոչ մի ծպտուն չէր խանդարում խաւարի դաժան իշխանութիւնը, որը ասես ծրգտում էր աննշմարելի պահել զթոտ հայեացքից մարդկային եղեռնազործութիւնների այդ չարաշուք տեսարանները: Բայց և այնպէս, եթէ անցնէինք դէպի մեր քաղաքը սաւնող խորդ ու բորդ ճանտպարհը, անշուշտ կարող կըլինէինք նկատել, որ այնտեղ մի մարդ խորունկ վշտի խոցերով լցուած՝ պաշտպանելով տանջանքների և հազար ու մի փորձութիւնների մէջ եփուած մարդի անվիճելի զգուշութիւններ, լուռ շարունակում էր ճանապարհը դէպի մեր գիւղը: Որքան նա մերձենում էր մեր գիւղին, այնքան նրա դէմքը ծածկւում էր դարդլու մարդի ցաւոտ կնճիռներով: Ահա՛ նա մօտեցաւ գիւղի կայերին, որոնք գիւղերում յաճախ ընկած են լինում ծայրերից էլ գրեթէ փոքր ինչ հեռու, և յանկարծ շանթահար եղածի նման կանգնեց. մի ինչ որ մանկան ծայն գիշերուտայ այդ պահուն աւելի քան գրաւեց նրա ուշադրութիւնը:

Գիւղի ընդհանուր տեսքը, որը տակաւին ծխում էր կրակի մէջ, այնքան երերող ցնցումներ յառաջ չբերեց նրա կրծքում, որքան այդ ծայնը: Միացող գիւղի և այդ մանկան դառնագին ճիւղ տարբեր տեղեր ունէին բռնած նրա ապառաժ կրծքում:

Մանկան ճիւղը կրում էր իր մէջ այն նուիրական զգացմունքը, որը յատուկ է հարազատ սրտերին. իսկ գիւղի սեւացած, խանձուած ու հրդեհուած պատկերը բորբոքում էր նրա վառ հայրենասիրութիւնը և վրէժ պահանջում:

Որքան վերջինն էր այնչոժում նրա ողջ էութիւնը և խրոտով դրութեան մէջ դնում, այնքան հզօր թափով առաջին զգացմունքն էր սեւացնում նրա վիրաւոր սիրտը: Այստեղ նրան կանչում էր օգնութեան ընկած ու թոյլ հարազատի ճիւղը, իսկ այնտեղ անարգուած հայրենի հողի անխաղած և խամրած երեսը:

Երկար նա կանգ առաւ. թւում էր, թէ նա ճիգեր էր թափում հէնց այստեղ ստուգելու, թէ արդեօք այն աղիողորմ ճիւղը իրան այնքան ծանօթ ու պաշտելի մանկանն է, թէ մի ուրիշի: Վերջապէս, կասես նա մի բան որոշեց և մի սուր ուստիւնով շարժուեց դէպի առաջ: Այժմ նրա յուսահատ, նրա անչափ ու կշիռ փութկոտութիւնը պարզ ասում էին, որ նա կորցրեց մինչև ալդտեղ գործ դրած զգուշութիւնը և ցրնորուածի նման թռաւ մեր դիւղի այնքան ծուռ ու մուռփողոցներով, ուր բիւրաւոր սրտամաշ տեսարաններ կային՝ այրուած մոխրի կոյտեր դառած աներ, իրանց շէմքի վրայ մորթոտուած խանձուած դիակներ ոչ մի սթափեցուցիչ տպաւորութիւն չէին թողնում նրա վրայ:

Վերջապէս նա կանգ առաւ այն տան դռան, ուր ապրում էր Բուլանխի Թունոն: Լացող, հառաչող մանկան ճիւղը լսում էր այն տան բազից, որը միակ կենդանի մահկանացուն էր սոյժրմ այդ սեւաբաղդ դիւղում, որը գիշերուալ այդ ժամին ասես սգում էր մեր երկրին հասած ծով վիշաբ:

Լուսինը տակաւին շարունակում էր իր հապճեպ ընթացքը: Ահա՛ նա կասես դիտմամբ դուրս եկաւ դարձեալ ամպերի թանձրութիւնից, և անծանօթի աչքերին երևաց հետևեալ աղետաբեր տեսարանը՝ ողջ տունը դեռ ծխում էր կրակի մէջ և կործանուած էր. իսկ բազի ուղիղ մէջտեղ ընկած էր վերքերով լի և արիւնով ներկուած կանացի մի դիակ, որի կրծքին ընկել էր լացող մանուկը, որը և ճնում էր, և ծծում էր

այն կարմիր հեղուկը, որ ծոր-ծոր թափուում էր նրա վերքերից:

Անծանօթը քար կտրածի նման տեսաւ այդ ամենը, ապա յանկարծ նրա լեզուի կապանքները արձակուեցին, և նա «Մաղօ, լաօ» ճչաց ու ընկաւ դժբաղդ դիակի վրայ:

Սարսափահար եղած մանուկը վայրկենաբար դադարեց լաց լինելուց և անդդող աչքերով ոտից մինչև գլուխը նայեց անծանօթին: Նա ճանաչեց իր թշուառ պապին և նրա պարանոցովը փարուեց «պա», «բի», «հու» մոմռալով:

Ուշաթափուած պապին ուշքի եկաւ, հարազատի քնքշութեամբ գրկեց իր մատաղ թոռան և երկամբ-երկամբ համբուրեց նրա երեսը. սակայն յանկարծ զարհուրածի նման մնաց ապշած՝ նա իր աչքերին չէր հաւատում. մանկան, իր սիրելի Ումբոյի քիթ ու պոօշը ողջ արեան մէջ էր: Նա փոքր ինչ մանրադրնին նայելուց լետոյ համոզուեց, որ թողք վիրաւորուած է. բայց երբ տեսաւ խեղճով Մաղկայ կուրծքը, իր ամբողջ էութեամբ սարսեց, նրա ծծերի պտուկները կտրած էին, որից տակաւին թափուում էր կարմիր արիւն, որը քիչ առաջ ծծում էր անբաղդ մանուկը, որից և կարծել էր նրա դէմքը:

Զայրոյթի դառն կրակով լցուած այդ եղկելի պապին թոռան դէպի երկինք բարձրացրեց և մի խորհրդաւոր ու մի հառաչող ձայնով աղաղակեց.

«Երկինք, քար, կռապաշտ, ապառաժ երկինք, էլ չնչի սաղ կրմնաս, չըս փլւիլ. ի՞նչես տուիլ զիս, չըս կռնաս առնիս: Էնտեղ, էն վերան երկիր դու արուն ու վարսած կերցուցիր մղի, փախանք, օր պրծնինք քու արնխում ճանկերուց, հմա էլի չարայ չ'եղաւ: Երկինք անիրաւ երկինք, կորսուցինք թագ, պսակ, կորսուցինք տուն-տեղ, կնիկ-ճիւղ, արուն-սղորաբայ, մէկ գլխի դնելու տեղ լէ խիանաթ կէնիս: Մըր ուտածն ա արուն, մէր խաղածը՝ սև, մըր կողինքը չոր գետին, էլ ի՞նչ կուգիս, դու հրլա բոյ չ'եղաւ, անգութ, անխիղճ երկինք»...

Յետոյ ոտքի ելաւ, ման եկաւ աւերուած տան շուրջը, գտաւ բահր, բագի պատի տակին մի խոր փոս փորեց, ուր և դրեց սևաբաղդ Մաղկայ մարմինը, ապա Ումբոյին կռացրեց

մօր կրծքին ու նկատեց նրան այնպէս, որպէս թէ նա բան է հասկանում:

«Տէս, լաօ, դքու մօր պտուղները անօրէնները կտրած տարած են յուրանց ջօշերուն շանց տալու խմար: Թըխ ես Բուլանխցի Յունօն չեղնիմ, որ մէկին տաս հալիֆս չհանիմ: Էն վախտ տե՛ս քղի ինչ կիտամ փէշքաշ: Դու էլ ուխտ էրա, լաջ, թէ իմ թոռնիս»... Ասեց և թաղեց հարսի մարմինը: Յետոյ շալակեց թոռան ու ընկաւ ճանապարհ:

Ճետեւալ առաւօտ նա Սահրւնու մօտ էր:

«Տէս, պ. Սահրւնի¹⁾), իդա դիմ թոռնա, շները զիտոր մօրը սպանածին, պտուղներ լէ կտրած տարածին իրանց ջօշերուն փէշքէշ: Դու զիտոր պտի պահիս, խնամիս, չուրի ես քէնս առնիմ: Թէ կըմեռնիմ, թէ դիս կսպանին, դու էղնիս քու ճըժերու արեւ-Աստուածը, զիտոր պտի ջօշըցուս ուրսիս թէ՛ յնչի մեռայ: Ես կորած, ցրուած ընկերներ ունիմ, պտի գտնիմ ու էլման մըր յառչուայ փէշաք բանցունք: Մէկն օր՝ Դարբնինց Սահրատը²⁾ յուդա եա: Մնացածին լէ կըգտնիմ»...

Ասաց, թոռան համբուրեց ու դուրս եկաւ:

V.

Անցաւ վեց ամիս:

Սիւնեաց լեռների մէկի գաղաթին հանգստանում էին մի խումբ մարդիկ, որոնք բոլորն էլ սպառազինուած էին և խորունկ հետաքրքրութեամբ յառել էին իրանց հայեացքը դէպի Գ. տանող ճանապարհը, ուր հազիւ-հազ նշմարոււմ էր մի հատիկ ճանապարհորդ, որը դէպի լեռան գաղաթը, դէպի խումբն էր ընթանում:

— Տղերք, եկողը կասես Մկօն լինի:

— Ձէ, Սահրատ, Մկօն զիդայ տեղրանք ի՞նչ կշինա, ես զէնոր թողուցի էրկիրը:

1) 2) Տես իմ յօդ. 1906 թ. «Լուսայի» մէջ:

— Մկօն է, Յուճո, թէ՛ Դու շատ անգամ պարծենում ես քո բոլանխցու հեռատեսութեամբ, բայց ես հաստատ քեզ ասում եմ, որ Մկօն է,—նկատեց Սահրատը:

— Ենի, ինչ ըսիմ, դրուստ կըսիս թէ՛ Մկօն եղնի.

Մինչ սրանք այսպէս խօսում էին, ճանապարհորդը մօտեցաւ նրանց այնքան, որ բոլորն էլ ճանաչեցին իրանց նախկին ընկերին, և նստողներին մէկը վազեց ընդառաջ՝ աւելի շուտ գրկելու իր հայրենակցին:

— Տօ, բարեւ, Մկօ,—ասաց նա,—երկրէն կուգամ:

— Խա վալլա, օղորմի քեօ խէր:

— Խոնչ կայ, ի՞նչ չկայ, Մկօ. դրուստ՝ մըր շօջ եղ կըմնա՞յ:

— Խատաւ:

— Յօ՞րի:

— Քեար կըքաշին վըր քօ պապուն, քեար ոտ կոտրեց, խատաւ:

— Եւ, դիմ պապ մեռա՞ւ:

— Վեց շաբաթ ինչ, քեօ խէր:

— Եւ, դիմ խէրն էլ մեռա՞ւ:

— Յեապա քեօ մօր կսկիծ զինոր սպանեց:

— Եւ, դիմ մէրն էլ մեռա՞ւ:

— Երկու շաբաթ, ինչ քեու աղբրտիք:

— Տօ, ալբրտինքս էլ մեռա՞ն, տապ իմ տուն ախօլաւ:

— Ախօլաւ չըմ գինայ. Սըր Կարապետ, լինչ կըսիս, համա ես գալուն ձեր տան տեղ կանափի արտեր...

— Տօ հէրիք է դատարկարանութեամբ պարապէք. դրանք թագա խաբսրներ չեն արիւնոտ երկրից. թող Մկօն գա՛, տեսնենք ինչ հալի է,—նկատեց Սահրատը:

Մկօն եկաւ և բոլոր ընկերներին բարեկուց յետոյ, յայտնեց նրանց իր ուրախութիւնը, որ լաւ ժամանակ է հասել:

— Տօ՛ աղբէր, ըսի մըր քամբախ էրկիրը դժոխքա, կորիմ ըռատ էղնիմ. հմա հոս դհա գէշա դարձել: Յէրիկ հասայ Սահուճու մօտ, էն զիս հասկցուց ձեր ո՛ւր էղնելը, ես լէ ճամպա ընկայ: Մկայ փա՛ռք Ասու, յօր գտայ զծղի սաղսալամաթ:

— Ձէ, չէ ուշ ես հասել Մկօ,—նկատեց նրան Սահրատը:

— Ինչ որ սա, Սահրատ, լաւ վախտա էկել, կրտիս Աստուած ճամպած էղնի՝ զիդա շարաթ մի կեղնի, ցեցը մտերա զիս, կտիս թէ կրբրդա՛յ, թէ՛ «զնա՛ Ումրօյիդ տես»։ Սրբ կարապի լաւ վախտ ա հասել՝ էդ թը՛ղ քնա՛ զիմ տեղ, ես խըլըսուն կէթամ Սահունու մօտ Ումրօյիս տեսնելու և զծղի թաղալ խարարներ բերելու։ Հոն մէկօրից յէվէլ չըմ քնայ։

— Շատ լաւ, Յունօ, որ էդքան ուղում ես, զնա։

— Հա՛, զուրբանիմ դքղի։

Միւս օր երեկոյեան Յունոն Սահունու մօտն էր։ Նա երկար նրա հետ առանձնացած խօսեց, մինչև Ումրշատը զարթնեց, ապա նա իր զթոտ ձեռքերով զրկեց, համբուրեց նրան և մի խորհրդաւոր լուծեամբ դուրս բերեց գրպանից մի «տէր ողորմեա»։

Սահունին քնաց քարացած՝ «տէր ողորմեան» իր ողջ հատիկներով կազմուած էր մարդկային պտուկներից, որոնք մի առանձնակի խնամքով չորացրած և ինքնուրոյն ձև էին ստացած։

Սահունին քար կտրածի նման դիտում էր, թէ ի՛նչ է աւում յուսահատ վրէժխնդրութեամբ լցուած ժերուկը։ Նա սյոդ «տէր ողորմեան» մի ուրոյն ձևով գցեց թոռան պարանոցով ու արտասուտթօր աչքերով նկատեց։

— Լաօ, Ումրօ, իմ խոզի, անօրէնները զիս զազան դարձուցին, հմա զիմ զազանութէնը ընդոնցի չափը չէ՝ ես կտրել իմ զէնոնց էն տղամարդոց պտուկները, որոնք տնմեղ մարդկանց խեղճերի, թոյլերի անմեղ արուն կըթափէին։ Ես կտրել եմ էն շներու անօրէն պտուկները, որոնք մայրերի, կնիկների էին սպանում, ու ճժերուն առանց ծժի թողնում։ Զղի լէ, լաօ, առանց ծժի թողին, հմա, տե՛ս քղի ի՛նչ լիշելիք եմ բերի էդ սև օրերից։ շատ զին, դուհւա 54 խատա։ հմա քանի Յունօն չմտե զերեզման, էս ճամպի թարգ չիտայ։ մեղքը առջի էրողի խոզուն էղնի։

Խօստացի՛ր, լաօ, դու էլ պապուդ ճամպով էթաս, թէ չէ անէծք ու նզովք կըկարդամ։ Քանի սաղիս, լաօ, զիդա «լիշելիքը» չպիտի վղիցդ խանիս։ Էդտեղ մի լեղայ նազլ պատմութէն կայ հայի սև օրերից։ անտէր խայի սաղ վիճակնա էդ-

տեղ: Զէդ մըր ներկան է և անցեալը, տեսնանք ապագան ինչադ կէդնի: Էս պատուէրներս դուրս շատ վախտ կուենամ քզի ըսելու, հլա շօջիւր, լաօ»—Ասաց ու խեղտուած ծայնով դուրս ելաւ իր սրտի դառնութիւնը, մաղծը թափելու, որը կրակի նման այրում էր նրա ամբողջ էութիւնը:

Սահունին սառածի, շշմածի նման երկա՛ր-երկա՛ր ոչինչ չէր խօսում. միայն, երբ ծերունին դուրս գնաց, հաղիւ կարողացաւ մոմռալ.

«Խոտորնակին խոտորնակ»:

ԽԱՆ-ՋԱԿԻ

